ՄԵՂՈՒ

ՀԱՆԴԵՍ ՏԱՍՆՕՐՅԱ

Խմբ. Հ.Գ. Սրվաճյան

1859թ., հունիսի 30, N 18

Արևմուտք, արձագանք Եվրոպայի լուսավորության

Այս հանդեսին խմբագիրը ո՞վ է.

- Ս.Ո. – Ի՞նչ մարդ է. – ան մեր գիտնալու բանը չէ, մենք իր անձը քննելու ոչ իշխանություն ունինք, ոչ կամք, ոչ ալ ճար. մեր քննելիքը, մեր պաշտոնին նայելով անոր գործք է, ազնոր զգացածը, անոր խորհածը, անոր գրածը, ածածը, դուրս տվածը, գլտորած հավկիթը։

(Գնում է ժողովրդի մեջ զբոսնելու՝ նրանց կարծիքներն իմանալու ու գրելու համար)

«Բարիզեն ազգային հանդես մը պիտի հրատարակվի տեյի՝ լսեցինք, ան օրը շուկա չը գացինք, ուրախության կիրակի բռնեցինք, ամեն մեկերիս երեքական օգգա շաբանեայի գինի խմեցինք, իրիկունն ալ ընդհանուր լուսավորություն ու հրավառություն (տոնանմա) ըրինք, հետևյալ օրն ալ կանուխ բաղնիք վազեցինք, որ ան տետրակը ընդունելու արժանի մաքուր ըլլանք։ Մորուք ունեցողը ածիլեց, անմորուքը այծեն (քեչի) փոխ առավ, գլուխնիս սանտրեցինք, ըղունգնիս կտրեցինք, ականջնիս մաքրեցինք, քիթերնիս խնչեցինք, Ֆռանսայոց նամակատան պատին առջև կույր պապուկներու պես կոկոզիկ ըրինք նստանք Բարիզեն գալու ԱՐԵԻՄՈՒՏՔԻՆ սպասելով։ Վասն զի միտքերնիս հաստատ դրեր էինք, որ ԵՒՐՈՊԱՅԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆ ալ հերիք էր մեզի լուսավորելու...

... Ետքն ալ ԱՐԵԻՄՈՒՏՔԻՆ մեջ ստորագրություն դնողը Ս.Ո. եղբայրն է եղեր ըսավ, ծո՛, Ս.Ո. ԱՐԵԻԵԼՔԸ գրողն է. չէ, հա. ինչո՞ւ չէ. անոր համար չէ, որ ԱՐԵԻՄՈՒՏՔԻՆ մեջ գրվածները ԱՐԵԻԵԼՔԻՆ մեջիններուն բոլորովին հակառակն է. ըսել է, որ անոր գրողը չէ ասոր ալ գրողը. չէ, ըսավ ԱՐԵԻՄՈՒՏՔԸ կարդացողը, աս ան մարդն է, բայց Արևելք և Արևմուտք իրարու դեմ ըլալով, անոնց երկուքին մեջ գտնվածներն ալ իրարու հակառակ և աշխարհիս այս երկու ծայրերը իրարմե որչափ հեռու են նե՝ ան գրվածներն ալ իրարմե այնչափ հեռու պիտի ըլլան. ասոր համար է, որ ԱՐԵԻԵԼՔԻՆ խմբագիրն ալ ԱՐԵԻՄՈՒՏՔ դրեր է հիմկու հանդեսին անունը»։

(Խոսակցություն է սկսում ամսագրի խմբագրի հետ)

- Ի՞նչ կընես կոր. – Ճշմարտություն կքարոզեմ կոր. – Հայերը չեն կարդար կոր. – Ճշմարտությունը չեն սիրեր. – Ճշմարտություն մը չկա մեջը կըսեն կոր. – Ճշմարտություն չը գտնողները Բարիզ ղրկե թող գան, քանի մը տարի ինձի աշակերտություն ընեն, որ լուսավորվին. – Ամենքն ալ ճշմարտություն չկա կըսեն կոր. – Հայերը հոգվով, մարմնով կույր են, չեն հասկնում իմ ըսածներս... ո՛վ Տեր, ե՞րբ հայերը սրատես պիտի ըլլան, որ ինձի պես հինգ կանգուն թանձրությամբ մարմար քարին ետև եղած բաները տեսնան, ե՞րբ պիտի բարկընա միտքերնին մամուկի թելի չափ, որ ճանճերուն ոտքերը կապելու կարող ըլլալ. ե՞րբ պիտի լեցվի ասոնց պարապ գլուխը, որ միշտ հարբուխ ըլլան. ե՞րբ ընտիր ախորժակ մը պիտի ունենան, որ օրը հինգ օգգա հաց ուտեն, ե՞րբ ոտքերնուն ջուր պիտի լեցվի, որ ուռին աճին, բարձրանան ու ինձի պես կատարյալ ըլլան վերջապես... բարեկամ, գնա՛, 1789-ին, 1831-ին, 1848-ին, 1852-ին հեղափոխությանց սիրուն ըլլա, գնա՛։

(Բառախաղ է արվում Արևմուտք և Արևմուկ բառերի միջև։ Պատմվում է մի շոգենավի մասին, որի կաթսաները սառել-մնացել էին, որովհետև նրանց կողքին «Արևմուտքի» համարներն էին ընկած)։

1860թ., հոկտեմբերի 20, N 113

«... Զմյուռնիո վարժարանը այն ատեն առաջադեմ էր, երբ լուսահոգի բազմարդյուն Անդրեաս վարժապետը համարում ու հարգ ստացած ըլալով հասարակութենեն և իբրև հայր՝ անոնց շատերուն պատկառելի երևնալովը առիթ ուներ յամենայն զորութենե ի պայծառություն ազգիս վարժարանին բարեկարգության և առաջադիմության անկախ տնօրենությամբ հսկել և իր արժանապատվությամը չ'թողուլ, որ թե իշխանք և թե մեծամեծք վարժարանին ներքին վերատեսչությանը միջամուխ ըլլան։ Բայց երբ մեծամեծաց ոմանց կողմանե այն 23-24 տարվան անտարբերությունը վերցավ և ուզեցին կարգադիր և բացարձակ տնօրեն ըլլալ վարժարանին, ասոնց հետ միանալով նաև Անդրեաս վարժապետին դեմ գաղտնի ոխ ունեցող և անհաշտ թշնամություն սնուցանող սրտեր կրող քանի մը նորելուկ մեծամեծներ, անհնարին աղետ տեղացուցին Անդրես վարժապետին գլխույն մինչև իջուցին ի գերեզման։

... 1857-ին Պ. Մարկոս Աղաբեկյանը բերին տնօրեն կարգեցին, որ տարիներ ի վեր խանգարված և անճոռնի կառավարության մեջ մտած վարժարանը վերստին իր բարեկարգությանը մեջ մտցուց, մեծ ճիգն թափելով։ Բայց պ. Մարկոսը Անդրեաս վարժապետեն ծանր եկավ հոգաբարձուաց, կամ Զմյուռնիո հայ հասարակության ազգապետ և ամիրապետ կարծված անձանց ոմանց։

... Տեսան ամիրապետք, որ Պ.Մարկոս համակրություն ստացած ըլլալով հասարակութենեն, չ'պիտի կրնան զանի իրենց ճամբուն բերել կամ ճամբու դնել, ուրիշ խորամանկություն բանեցուցին. ամսականը չտալ, ուշացնել, նյութական պիտոյից մատակարարության անփույթ կենալ։ Սիրով պ. Մարկոս քանի մ'անգամ բողոքներեն վերջը, ըստ կանոնի 2 ամիս առաջ ծանույց, որ եթե իր առաջարկած պայմաններն չընդունին, պիտի հրաժարի։ Պայմանաժամը լրացավ, մեկնեցավ պ.Մարկոս վարժարանեն և ահա իշխանաց և իշխանապետաց ոտքերը մտան վարժարանին մեջ. և սկսան վե՛ր վար մեծ մեծ տնօրենություններ ընել։

Վարժարանին մեջ վարժապետ ըլլալու պաշտոնը հանձն առնող Զմյուռնիացի ուսումնականը առաջարկություններ ունի. Ա. ամսականները ժամանակին տալ, Բ. իր գործին մարդ չը խառնվիլ, միայն օրինավոր կանոններու առաջնորդությամբ կառավարել վարժարանը և կանոններուն իշխել տալ։ Այս առաջարկությունը շատ ծանր է անոնց, ուստի ամիրապետները, անանկ մարդ վարժապետ կը փնտռեն, որ իրենց վարպետորդիությանց անտեղյակ ըլլալով, ուզածներուն պես խաղցընեն։

... Այս ամիրապետները եռապետություն մը կազմած են, – Հռովմա եռապետությունը, կը հիշե՞ս, – ահա նույն եռապետությունն է, որ հոս, Զմյուռնիո մեջ կը գործադրվի. եկեղեցի շինել պետք է, անոնց ժողովոցն մեջ կ'որոշվի. եկեղեցվույն այս ինչ տեղը, այս ինչ ձևով շինե՞լ պետք է, անոնց ժողովոցն գիտնալու բանն է. ահագին և հսկայաձև առաջնորդարա՞ն պետք է. այոն անոնց ժողովը կը վճռե, նոր իշխան կամ հոգաբարձո՞ւ դրվեցան կամ անոնց արբանյակներեն են կամ ազգական կամ բարեկամ, կամ հայր կամ եղբայր, և կամ իրենցմե մեկը։ Մեռնին, ազգային գործերը չեն ձգիր երեսի վրա. իրենք պիտի հսկեն, իրենք ազգասեր են, իրենք վարձու պիտի տան կպվածքները, իրենք, իրենք և միշտ իրենք, որո՞ւ հաշիվ տված ունի, ո՞րչափ ծախք կա մարդ չի

գիտեր։ Կալվածքներուն մասին բանեցուցած խարդախություններնին բոլոր Զմյուռնիացիք գիտեն, վասն զի շա՛տ շա՛տ հուզմունք և կռիվներ եղած են և... անօգուտ կերպով»։

1860թ., նոյեմբերի 10, N 115

«Զարմանալի տեսարան մը կընծայեն մեզ այս օրերս Զմյուռնիո արթուն և աշխույժ հայ գաղթականք, որոնք կարծես թե կրակ առեր, կը բռնկին։ Հոն ամեն ինչ խառն ու շփոթ է։ Ոչ առաջնորդը ձայն ունի, ոչ ժողովարանը օրինավոր անդամ, ոչ իշխանը՝ գահ, ոչ եկեղեցականը՝ աթոռ, ոչ հոգաբարձուն՝ պաշտոն և ոչ հասարակությունը՝ որոշ նպատակ մը։ Ամեն գլխե մեյ-մեկ ձայն կելլե, ո՛րը կսպառնա, ո՛րը կ'ողբա, ո՛րը կը ծիծաղի և ոմանք՝ օրը մերն է, հառաջ քալենք, կը պոռան։ Տուն, հրապարակ, շուկա և ժողովարան այս այլանդակ աղմկին արձագանքը կարձակեն։ Զմյուռնիո լրագիրք իրար կանցնին ՄԻՈՒԹՅՈՒՆԸ առաջ կը նետվի, ազգային իրավունքը պաշտպանելու համար, ԱՐՇԱԼՈՒՅՍԸ թևեն կը քաշե ԱՆՈՒՇ ՏԵՂԸ ԿԱՊԵ մռմռալով և այս գոռում-գոչումը այնքան կսաստկանա, որ վերջապես մինչև Պոսֆոր կհասնի։

Այս անհնարին շփոթության բուռն իսկ պատճառը ինչ է։ Առ երևույթս Ս.Մեսրոպյան վարժարանին անկարգ վիճակը կերևի. իսկ բուն վեճը հին կունտերու և նոր գլուխներու մեջ է, որոնք իրարու դեմ ճակատ կազմած հետին ճիգերնին կթափեն ցուցնելու, թե ո՛վ որուն ճակատը պիտի պատռե։ Ինչպես գործնական, նույնպես մտական հեղափոխություն կա, ու այս ճգնաժամին մեջն են և Զմյուռնիո հայերը։ Այսպիսի գրգռություն մը ապարդյուն չի համարվիր, մանավանդ թե կենդանության նշան է, եթե վեճը օրինավոր սահմանեն դուրս չելնե և իրավասեր կողմը հաղթանակ տանի։

... ԱՐՇԱԼՈՒՍՈ անուշ և շողոմարար զգվանքը մեր դափնյա պսակներուն վրա այնքան քնացուց զմեզ, որ անոնք չորցուց, մեր արտաքին վիրաց վրա այնպիսի թմրական սպեղանի մը քսեց, որ անոնց ցավը ներս զարկավ և զմեզ այնպիսի կերպարանքով ներկայացուց մեր ատենակցաց, որ զանոնք զմայլեցան մեր վրա, թե մենք նույն կերպարանքը չէինք գտեր առ մեզ։

Այո, դյուրին է ազատամիտ կոչել զմեզ, սակայն գիտե՞ք արդյոք, որ սույն ազատությունը չէ թե շատերուն մտաց և համոզմանց սկզբունքն են, այլ անոնց լեզված և վարուց անձուկ շշուկն ու փայլուն ներկը»։

(Առաջին անգամ այստեղ է հիշատակվում Ստեփան Պալասանյանը, որպես բացասական մարդ)։

1861թ., հունվարի 20, N 122

Միություն և Զմյուռնիայի հայեր

Մի պատվիրակություն, Ղուկաս Պալդազարյանի գլխավորությամբ, գալիս է «Մեղվի» խմբագրություն խնդրելով Միության փակման պատճառները իրենց ուզած ձևով մեկնաբանել։ Եռապետության երկրորդ անդամը Գաբրիել Ճշմարտախոսյանն էր։

«Ազնիվ պեյ, ամեն բան, ազդեցություն, խրատ, սպառնալիք ի գործ դրինք, որ ՄԻՈՒԹՅՈՒՆ հանդեսին խմբագիրները կարգի ու կանոնի բերենք, բայց իզուր։ Այս թերթը անդադար ազգին մեջ երկպառակություն և խռովություն հուզելեն զատ, բան մը ըրած չունի։ Մեր պատվույն և ընտանյաց

հանգստության կը դիպչի և միանգամայն ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱԼ ԿԸ ԳՐԵ։ Ձեր ուշադրությունը այս հանդիսին ըստամբակ խմբագրաց վրա կը հրավիրեմ։ ԵԹԵ ԱՆՈՆՑ ԱԶԱՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԸ ԶՍՊԵՔ, ՎԵՐՋԸ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԱՌՆՈՒԼ»։

(Այսպես են զեկուցել Զմյուռնիայի փաշայի տեղակալ Քյահյա բեյին, և Գաբրիել Ճշմարտախոսյանի հանձնարարությամբ այսպես զեկուցել է Ղուկաս Պալդազարյանը)։

1961 թ., N 123

«Միության» հանցանքն այն էր, որ հրատարակվում էր առանց պետության թույլտվությունն ունենալու։

(Ազգատյացները «Միության» խմբագիրներին բանտարկել տալուց հետո) «Հետևյալ օրը նույն ժամին դարձյալ կերթան ու բանտեն հանել կուտան խմբագիրները, որպեսզի ճանաչեն իրենց ազատարարները։ Այսպես ահա հանուն ազգին (որովհետև այս անձինք ամեն բան անոր անունով կը գործեն) քանի մը ազգատյացներու ձեռքե կ'ընդունին խմբագիրք այս շնորհը։ Եվ վստահ ենք, որ եթե զիջանին խմբագիրք այս օրեն իրենց ծառան ըլլալու, իրենց ամեն գրելիքներն անոնց նպաստավոր ըլլալու կերպով գրելու, վերջապես, զանոնք իրենց մեծ ճանչնելու, այսօրեն Միություն հանդեսն ալ նորեն կ'սկսի հրատարակվիլ։ Միայն թե անոնք մեծ ճանչնալով՝ անոնց հրամանով շարժելու են, գրածնին անոնց սրբագրել տալու են, անոնց բերանով խոսելու են։ Վերջապես անոնց ամեն կամքին, կիրքին ու քմաց կույր, խուլ և անզգա ծառաներ ըլլալու են»։

(Հայկ անունով մեկն է հիշատակվում)

Այս հոդվածից հետո, Ղուկաս Պալդազարյանը, որը 1859-ից սկսած Մեղուի գործակալն էր Զմյուռնիայում, հրաժարվում է այդ գործից։ Այդ աշխատանքը կատարում է Հաշտենից ընկերությունը։

1861 թ., մարտի 10, N 127

Պալդազարյանը իր թերթի N 640-ում դատապարտում է եռապետներին (Մեղուն բերել էր), իսկ 643-ում «մի քանի ոսկիից խաբվելով» գովք է հյուսում նրանց։ «Փարիզ» լրագիրը 37 համարում տալիս է եռապետների գործը և հականե-հանվանե հիշատակում նրանց։

«Պ. Ղ.Պալդազարյանը Իզմիրի նման երևելի քաղաքի մը լրագրության դժբախտաբար խմբագիր գտնվելով, մեծ պարտավորություններ ունի ազգին դիմացը։ Այսպիսի հակասական ու կեղծապատիր տեղեկություններ տալով, ճշմարտությունը վարագուրելով, ստությունը վեր դասելով, անիրավությունը պարտըկելով, ազգատյաց մարդիկը՝ ազգասեր, Հուդաները՝ Մատաթիաներ, Վասակները՝ Վարդաններ կերպարանելով և ընդհանուր աշխարհիս հանդեսին մեջ բերելով, անհնարին մեղապարտության ներքև կ'իյնի ազգային պատմության դիմաց և մարդկության և ճշմարտության դեմ միանգամայն կը մեղանչե, երբ յուր ճշմարտության նվիրված գրիչը՝ զողաքաղության կը զոհե վատությամբ»։

Իզմիր 4-16 մարտ 1861թ.

1861թ. մարտի 20, N 128

Արշալույս Արարատյանը «Իր սխալ դրությամբ և սխալ սկզբունքովն (եթե ուներ) փետրաթափ մնաց հրապարակին մեջ. Հայոց լրագիր չմնաց, որ չբամբասեր, չզրպարտեր, սուտ չըմնաց, որ չըխոսեր, չըգրեր. մերթ Զմյուռնիայի բոլոր հայ ժողովուրդը դատապարտեց և մերթ անոնց դեմ հառնող մեկ քանի անձերը. մերթ Զմյուռնիո երիտասարդները անարգեց, և մերթ անոնց լրագիրը. մեկուն հուր սպառնացավ, մյուսին թուր. ամենքը ազգատյաց եղան, ամենքը սխալ դատողության տեր, ամենքը կույր, խուլ, անզգա, տմարդի և միայն ինք ու իր պաշտպանած մեկ քանի անձերն են միայն ազգասեր, բարեպաշտ, հեռատես, դյուրազգաց և կրթյալ։ Ամենուն ըսածը սուտ է, զրպարտություն է. իր գրածն ու իր բարեկամներուն ըսածն է միայն ճշմարտություն»։

«Արշալույսի» խմբագիրը, երբ գնացել էր Պոլիս իր պատգամավորությունը կատարելու համար, վատ կենցաղավարություն էր ունեցել։

«Երբ կարդացվեցավ օգտակար Մեղվիդ միջոցավ Արշալույս Արարատյանի խմբագրին ՅԵԶՈՒԻԹԱԿԱՆ պատգամավորությունը համանմանի մը կողմե, Զմյուռնիո մեջ ամեն բերնե պախարակվեցավ այս վատ ընթացքը, բայց այս նոր Սաավերդրան ինչ որ էր՝ նույնն է. այլ մի՞թե այս ձիրքը նոր ստացավ, թե ոչ ի վաղուց»։

(Ծան. Հետաքրքիր ընթերցողացս կատարյալ տեղեկություն տալու համար կը հրավիրեմ, որ ազատամիտ Խ.Մելիքսելումյանին Զմյուռնիո մեջ երբեմն հրատարակված և բռնաբարության զոհ եղած նահատակ հայրենասեր օրագիրը կարդան, ուր պիտի գտնեն Պ.Պալդազարյանի գանկաբանությունը...)

«Այս պարագայիս մեջ յուր շինծու գլուխը ուրիշ բան չմտածեց...»

(Ծան. Ընթերցողք կը կարծեն, որ այս բառով զինքը նախատել կ'ուզենք, այլ ճշմարիտը խոսեցանք)։

«Քահանայի մը տուն դավազ մտնել՝ ազգին տունը մտնել ըսել է, մանավանդ այսպիսի քահանայի մը...»

(Ծան. Մարգար Միրզա Վանանդեցի աստվածաբան և պերճուսումն քահանայն Ս.Մեսրոպյան և Ս.Հռիփսիմյանց դպրատուններու առաջին դասու վարժապետը, որ վախճանեցավ 1861 թ. փետրվարի 23-ին, նույն օրը հուղարկավորության հանդեսը կատարվեցավ խուռն բազմությամբ, առաջ տարվեցավ Ս.Մեսրովպյան վարժատունը, ուր վրան դամբանական ճառ մը կարդացվեցավ և ուր հանգուցյալը ներկա հոգաբարձու աղաներեն յուր վերջին նախատինքը առած էր իբր վարձատրություն յուր չնաշխարհիկ տաղանդվոց. նամակ մը ընդունելով Պ.Պալդազարյանի ձեռագրով, որ ... Մեսրոպյան դպրոցեն, թե դպրատունը ճարտասանության պետք չունի և որ ամսականը ասանկ վերջը 500 ղ, փոխանակ 900-ի։ Ո՜վ հինցած ատելության վրեժխնդիր ոգի. Արշալույսը անոր թաղման դամբանականը իսկ չըհիշեր։

● Հիշատակվում է առաջիկայում հրատարակվող մի գիրք, ուր գրված են եռապետների և Պալդազարյանի արարքները։

● Իզմիրի հայ հասարակությունը. 100 բաժանորդ գրվեց «Միություն» հանդեսին, իսկ նույն ժամանակ Արշալույսը 10, ամենաշատը՝15 բաժանորդ ուներ քաղաքում։

● 1861 թ. մարտին Իզմիրում արդեն կար Վասպուրական թատրոնը։

● 1861 թ. հունիսին Վասպուրական թատրոնը բեմադրում է «Արշակա ողբերգությունը»։

1861թ., հունիս, N 138

«Արշալույսը» Անգղիական դրոշակին ներքև ըլալով, երբեմն կը մոռանա, որ հայը քաղաքականապես իր ապրած երկրին օրինակ հպատակ և հնազանդ է ըստ տեղվույն։

1862թ., փետրվարի 28, N 154

Ճշմարտությունք և անաչառությունք

Verite et sevetite

Վերոհիշյալ անունով ֆրանսերեն գրքույկը, որ թատրոնականության և թատերական խաղերու և դերասանաց քննադատություն մ' է գլխավորապես ֆրանսիայի վերաբերյալ, հորինած է Պ.Յ.Գ. Խորասանճյան և կը ծախվի Ընթերցասիրաց գրասենյակը։

1863թ., մայիսի 14, N 199

Թափառական հրեա

(Գրքի արժեքն ու թարգմանությունը նշելուց հետո) «1853-ին, մեծարգո Պ.Ս.Ոսկանյանը աս հիանալի գրքին մեկ մասը հայերեն լեզվի թարգմանեց և մեծարգո Խ.Օսկանյանի ջանյուք Պոլսո մեջ մինչև մեկ երրորդը..., բայց ավա՜ղ որ (եթե լսածնիս շիտակ է) հայադեմ ճիզվիթներու թունալից մանգաղը արմատեն խլեց... (Բազմակետերը իրենց դրածն է)։

Մեր լսածին նայելով՝ Փարիզի մեջ ալ հայ ազգասերներ աս եզական գործը հայերեն լեզվի թարգմանելու ձեռնամուխ եղան, բայց չենք գիտեր, թե ինչո՞ւ համար դադրեցավ...

ՈՒրախ ենք, որ Ռուսիո մեջ մեծահարգո Մ.Նալբանդյանի ձեռոյ թարգմանվեր է, բայց ափսո՜ս, որ Տաճկաստանի հայերը դեռ զանի ալ տեսած չեն և եթե ունենալ ալ անկե, կարելի է այն տեղի լեզուն իրենց ճաշակին հարմար չգա»։

Ծան. Հարմար ժամանակին պիտի փութանք Արգո հասարակությանց տեղեկություն մը տալ, թե ինչ միջոցով թշնամին արգիլեց այս գիրքին թարգմանությունն ու տպվիլը։

(Կարապետ Փանոսյանը թարգմանել է թուրքերեն։ Այս է հիշյալ հոդվածի նյութը)։

1863թ., սեպտեմբերի 17, N 217

Հայ թերթերու վիճակը

« «Արևմուտքը», որ մեկ քանի տարի է դադրած էր, կը լսենք, որ տարեգլխուն նորեն պիտի սկսի շարունակվիլ արգո Ստեփան Ոսկանյանի խմբագրությամբ Փարիզի մեջ»։

1864թ., մարտի 28, N 236

«Արևմուտք ալ Բարիզեն սկսավ վերստին հրատարակվիլ, դարձյալ Պ.Ս.Ոսկանի խմբագրությամբ. այն անձին, որ գիշեր ցերեկ հայրենիք կ'երազե և կ'երկնե, հսկայաքայլ հառաջադիմություն կը բաղձա ազգին, և այս նպատակավ փոքր ինչ խիստ է իր պահանջողությանց մեջ, իր եռանդոտ բնավորությամբ կուզե, որ ազգը ցատկե՝ մինչդեռ ուղիղ քայլելու նոր պիտի վարժի, մեծ բան կը սպասե դեռ տղա ազգե մը. այսու ամենայնիվ կը ցանկանք, որ ըլլա ըստ սրտի յուրում, և կարելի ըլլա իրեն տեսնել՝ ինչ որ կը փափագի տեսնել»։

1864թ., մայիսի 16, N 241

(Իզմիրի ազգային խառը գործերի մասին, եռապետների, որոնք պատրիարքի բարեկամներն են, արարքների մասին, Ս.Ստեփաննոս եկեղեցու շինության ժամանակ խաչկալների վրա կատարված ահռելի ծախսերի և դրանց հետևանքով ժողովրդի մեջ եղած հուզումների մասին)։

N 243 նույն հարցերն է («Ճշմարտություն և իրավունք»)։ Հետո շատ է գրվել սրա շուրջ՝ N 250, N 258, N 261։

1864թ. մայիսի 16, N 241

«Իզմիրի հայերը, որոնք ընդամենը 4500 հոգի են»։

1864թ., հոկտեմբերի 19, N 249

«Հյունքյար. Պեյենտյան Տեր Հովհաննես քահանան ամսուս 14-ին, չորեքշաբթի օրը, ճամբա ելավ ընտանիքով հանդերձ Բարիզ երթալու, ուր Ազգային վարչության խնդրանոքն ու Բ. Դռան հավանության, Կայսերական Տերությանց ծախքովը պիտի նստի՝ հոն Օսմանյան տերության ասկե ղրկած հայ աշակերտներուն կրոնական պարտավորությանցը վրա հսկելու։

Ազգային Վարչությունը մտածեց, թե այս տարի հինգ տղա, գալ տարի ալ նույնչափ և այսպես ասկե չորս տարի ետքը շարունակ ամեն ատեն քսանական հայ պատանիք պիտի գտնվին Բարիզ, որոնք Կայսերական կառավարության շնորհովն գիտություն ուսանելու և օր մը իրենց հայրենյաց օգտակար անդամ մը ըլլալու համար հոն պանդխտություն պիտի կրեն»։